ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿԻ Ն. ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5
ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՀՊՉ-ով սահմանված կարողունակությունները և դրանց ձևավորումը հայոց լեզվի և գրականության ուսուցման գործընթացում

ԿԱՏԱՐՈՂ՝ Սոնա Աթոյան, Օշականի Մ. Մաշտոցի անվան մ/դ

ՂԵԿԱՎԱՐ՝ Կարինե Վահանյան

ԱՇՏԱՐԱԿ - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …… 3

Կարողունակությունները՝ որպես հանրակրթության բովանդակության կառուցման հենասյուն …….. 5

Հայոց լեզուն և գրականությունը՝ որպես կարողունակությունների ձևավորման հենք ……. 10

Եզրակացություն ……. 17

Օգտագործված գրականության ցանկ …….. 18

Ներածություն

Ապագան վտանգված ժողովուրդների վերջին խաղաթուղթը
վերադաստիարակությունն է :
Գ. Նժդեհ

Մանկավարժության պատմությունն ուսումնասիրելով, կրթական համակարգի փոփոխություններին հետևելով և դրանք վերլուծելով՝ հասկանում ենք, որ բազմաթիվ ու բազմապիսի փոփոխություններով հանդերձ կրթության հիմնական և կարևոր նպատակը եղել և մնում է անհատի ճիշտ և համակողմանի դաստիարակությունն ու ձևավորումը: Տեսական գիտելիքները ամրապնդվում և հմտություններ են դառնում, երբ դրանք վերլուծվում են, քննարկվում, համադրվում ծանոթ իրավիճակների հետ: Մարդկային դրական որակների ձևավորման համար անհրաժեշտություն է առաջանում գտնել այդ ձևավորումն ապահովող գործունեության տեսակներ, մշակել դրանց առաջացումը և կառավարումը խթանող մեթոդներ: Դեռ 19–րդ դարի վերջին ամերիկացի խոշորագույն գյուտարար և ֆիզիկոս Թոմաս Էդիսոնը նկատել է. «Քաղաքակրթության մեծագույն առաջադրանքը մարդուն մտածել սովորեցնելն է»(1): Այո՛, եթե սովորողի գործունեությունը միայն վերարտադրողական լինի, և դրան չգումարվի նրա վերաբերմունքի և արժեքային համակարգի ձևավորումը, այդ դեպքում գուցե մենք կունենանք բազմիմաց սովորող, բայց նա չի զարգանա և ստեղծագործող չի դառնա: Նա պետք է հասկանա, թե ինչու է ինքը սովորում տվյալ նյութը, ինչ է այն իրեն տալու: Այսինքն՝ նա հստակ կերպով պիտի տեսնի դասանպատակը, ինչը ուսումնառության գործընթացի կարևորագույն շարժառիթավորումն է: Ընթացող կրթական բարեփոխումները միտված են նրան, որ իմացությունն ու գիտելիքը դառնան հմտություն և կարողունակություն: Պետք է նկատել, որ կարողունակության ձևավորումը անընդհատ գործընթաց է, և չի կարելի համարել վեջնականորեն ձևավորված որևէ արդյունք: Այն սկսվում է վաղ մանկությունից և շարունակվում ամբողջ կյանքի ընթացքում: Կարող ենք փաստել, որ կրթական բարենպաստ միջավայրի ապահովումը սովորողի համար ստեղծում է անհրաժեշտ ազդակներ, որպեսզի դասապրոցեսը դառնա ոչ թե պարտադրանք, այլ սեփական հետաքրքրությունները, ներուժը համակարգելու և տեսանելի արդյունք ստանալու

հարթակ: Հստակ է, որ երբ անհատը իր գործունեության ժամանակ հայտնաբերում է իր համար կարևոր նոր արժեքներ, դրանք նոր շարժառիթներ են դառնում՝ մղելով նոր գործունեության, որը դառնում է տվյալ անհատի աստիճանական զարգացման և նրա ձեռքբերումների ուղին:

Թեմայի արդիականությունը

Տվյալ հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը և հիմնավորվածությունն այն է, որ չնայած հանրակրթական պետական չափորոշիչի (այսուհետև՝ ՀՊՉ) սահմանած նպատակներին, ի հեճուկս իրականության մարտահրավերների՝ շատերս, դեռևս ամբողջովին չընկալելով կարողունակությունների բնութագրիչները և ինքներս էլ լավ չպատկերացնելով դրանք ձևավորելու մեթոդներն ու եղանակները, մեր նախանշած վերջնարդյունքներն ապահովել չենք կարողանում: Կարծում ենք՝ թեման կարիք ունի նոր վերլուծությունների և պարզաբանումների: Մեզ համար առավել կարևոր է անդրադառնալ հայոց լեզվի և գրականության դերին կարողունակությունների ձևավորման գործում, որովհետև կարծում ենք՝ մայրենի լեզվի դերի կարևորումն ու արժևորումը հասարակության մեջ գնալով նվազում է:

Հետազոտության նպատակը

Այս հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է, անդրադառնալով ութ առանցքային կարողունակություններին, ուսումնասիրելով դրանց բնութագրիչները՝ ներկայացնել դրանց կարևորությունը անհատի ձևավորման և նրա հետագա կյանքի գործունեության համար, առանձնացնել հայոց լեզվի և գրականության դերը այդ գործընթացում:

Հետազոտության խնդիրները

Այս հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

1. Ուսումնասիրել ՀՊՉ-ով սահմանված ութ առանցքային կարողունակությունների բնութագրիչները:

2. Ներկայացնել կարողունակությունների ձևավորման դերը հանրակրթության բովանդակության կառուցման մեջ:

3. Բացահայտել հայոց լեզվի և գրականության կարևորությունը կարողունակության ձևավորման ընթացքում:

Կարողունակությունները՝ որպես հանրակրթության բովանդակության կառուցման հենասյուն

Կարողունակությունների ձևավորումը շարունակական գործընթաց է, այն սկսվում է վաղ մանկությունից և շարունակվում ամբողջ կյանքի ընթացքում: Ինչպես գիտենք, կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է, գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում լուծել որոշակի խնդիրներ: Սա նշանակում է՝ որևէ բնագավառում հավակնություն ունեցողը պետք է տիրապետի այդ բնագավառին բնորոշ որոշակի գիտելիքների, հմուտ լինի այդ բնագավառում որոշակի գործունեություն ծավալելու, ունենա արժեքային որոշակի համակարգ և կարողանա իր դիրքորոշումն արտահայտել տվյալ բնագավառի որոշակի հարցադրումների և երևույթների վերաբերյալ:



Գծապատկեր 1.

Միջնակարգ կրթության կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսում-նառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով: Անհրաժեշտ է, որ հանրակրթությունը ձևավորի այնպիսի կարողունակություններ, որոնք արագ փոփոխվող հասարակությունում յուրաքանչյուր

անհատի թույլ կտան կազմակերպել իր առօրյա կյանքն ու գործունեությունը և կբխեն հանրակրթության հիմնական նպատակներից: Իսկ հանրակրթության գերագույն նպատակը, ինչպես սահմանում է Հանրակրթության պետական չափորոշիչը, ութ առանցքային կարողունակությունների ձևավորումն է, որի հիմքում ընկած են դպրոցի տարբեր աստիճանի շրջանավարտների ակնկալվող վերջնարդյունքները: Ըստ նոր չափորոշչի տրամաբանության՝ հենց դրանք պիտի ուղենիշ լինեն առանձին առարկաների չափորոշիչների և ծրագրերի մշակման համար, որոնց հիման վրա էլ պետք է ստեղծվեն համապատասխան դասագրքերն ու ուսումնական այլ գրականությունը(2): Այսինքն՝ ստացվում է կրթության բովանդակության կառուցման հետևյալ սխեման.



Հստակ է մի բան՝ առանձին առարկաների բովանդակության վրա կառուցված կրթական մոդելը իր դիրքը զիջում է կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելին: «Բոլորի համար պարտադիր պահանջների շարքում նեղառարկայական գիտելիքներից և գործնականում դրանք կիրառելու կարողություններից բացի, որոշիչ դեր են սկսում խաղալ համապիտանի կարողունակությունները, որոնք աստիճանաբար դառնում են համընդհանուր գրագիտության պարտադիր բաղադրատարրեր»(3, 51):

Հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված կարողունակություններն են՝

1. լեզվական գրագիտություն և կարողունակություն,

2. սովորել սովորելու կարողունակություն,

3. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,

4 . ժողովրդավարական քաղաքացիական կարողունակություն,

5. թվային և մեդիա կարողունակություն,

6. մշակութային կարողունակություն,

7. մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,

8. տնտեսական կարողունակություն:

Համառոտ կանդրադառնանք ութ առանցքային կարողունակություններից յուրաքանչյուրին՝ նպատակ ունենալով շեշտել նրանց ձևավորման կարևորությունը անհատի կայացման գործում: Կարծում ենք՝ մյուս բոլոր կարողունակությունների հիմքը սովորել սովորելու կարողունակությունն է, որը ենթադրում է, որ սովորողը գիտելիք ունի իր կրթական կարիքների մասին, բացահայտել է դրանք և գիտի ինչպես բավարարել: Տեղյակ է ուսումնառության ռազմվարություններին և կրթական համակարգի հնարավորություններին, գիտի իր ուսումնառության գործընթացում որտեղ և ինչպես գտնել այն նյութերն ու աջակցությունը, որոնք կբարձրացնեն իր ուսումնառության արդյունավետությունը: Այս կարողունակությունն առաջնային է նրանով, որ այն ունեցող սովորողը կկարողանա կանխատեսել և նախագծել իր հետագա զարգացման հեռանկարներն ու ուղենիշները, քանի որ <<ունի դրական վերաբերմունք ամբողջ կյանքի ընթացքում սովորելու նկատմամբ, անընդհատ կրթության ներուժի և արժեքի ընկալում և ուսումնառության արդյունքները կյանքի տարբեր համատեքստերում կիրառելու հետաքրքրասիրություն»(4,16.09,21[25]): Ստացվում է, որ սովորել սովորելու կարողունակությունը կապված է անձի՝ ինքն իրեն որպես սովորող ընկալելու, սեփական փորձը կառուցելու, անձնական կրթական նպատակներ սահմանելու, զարգացման հետագծեր մշակելու և դրանց հետևելու ունակության հետ: Սովորել սովորելու կարողունակության բնութագրիչներին ծանոթանալիս մտաբերեցինք համացանցում հանդիպած չին մեծ փիլիսոփա և գրող Լաո Ցզիի հաճարեղ ասույթը. «Հազար մղոն ճանապարհորդությունը սկսվում է մեկ քայլով»(5): Այո՛, եթե մեզանից յուրաքանչյուրը դրական վերաբերմունք ունենա ամբողջ կյանքի ընթացքում սովորելու նկատմամբ և իմանա ինչ և ինչպես պետք է անել, ապա կկարողանա ապահովել իր հետագա զարգացումը: Ահա այստեղ կարևորվում է հաջորդ կարողունակության ձևավորումը: Ըստ մեր պատկերացրած առաջնահերթության՝ հաջորդը ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունն է: Կարծում ենք՝ սովորողի կողմից իր կրթական կարիքների

բացահայտումը և դրանք բավարարելու ուղիներ գտնելու հաջողվածությունը կախված է սովորողի ինքնաճանաչումից: Իսկ վերջինիս լավագույն արդյունքը իրականին մոտ ինքնագնահատականն է: Կարծում ենք՝ վերոհիշյալ կարողունակությունների ձևավորումից հետո միայն կարելի է խոսել մյուս կարողունակությունների ձևավորման և զարգացման մասին: Միայն ինքն իրեն իրապես ճանաչող, անընդհատ սովորելու ցանկություն և ձգտում ունեցող անհատը կարող է պատկերացնել մարդ–հասարակություն–շրջակա միջավայր փոխհարաբերությունները և հասկանալ դրանցում իր տեղն ու գործառույթները (տնտեսական կարողունակություն): Իսկ վերջինիս ձևավորումը ենթադրում է՝ կարեկցանք և հոգատարություն մարդկանց և աշխարհի նկատմամբ, պատասխանատու և բարոյական լինելու դիրքորոշում, բնության և մարդու գործունեության փոխկապվածության ըմբռնում: Տնտեսական կարողունակությանը առնչակից է ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունը, որի ձևավորումը միտված է ժողովրդավարության, ազատության, բարեվարքության և սոցիալական արդարության հետամուտ հասարակության զարգացմանը: Հանրակրթության առջև դրված խնդիրներից են թվային և մեդիա, մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակությունների ձևավորումները: Տեխնոլոգիայի զարգացման մեր ժամանակաշրջանում խիստ կարևորում ենք վերջին երկու կարողունակությունների դերը, և կարծում ենք՝ մեզ շրջապատող տեղեկատվական բազմազանության մեջ պարզապես անհրաժեշտություն է այս կարողունակությունների ընկալումը: Մեդիագրագիտություն ունենալը, տեսածը, լսածը, կարդացածը վերլուծության ենթարկելու հմտությունը, թե՛ որպես մեդիասպառող, թե՛ որպես մեդիաստեղծող սովորողի ձևավորումը ապահովելու են նրա անվտանգությունը տվյալ դաշտում և ծառայելու են հետագա զարգացմանը՝ հնարավորություն ստեղծելով օգտագործել համացանցը՝ որպես ուսումնական, համագործակցային և աշխատանքային հարթակ:

Կարծում ենք՝ միմյանց սերտորեն փոխկապված են անհատ–հասարակություն փոխհարաբերությունը և ժողովուրդ–ազգ–մշակույթ-քաղաքակրթություն հասկացություն-ները: Սեփական և այլ ազգերի մշակույթների ճանաչումն ու ընկալումը, արվեստի և արհեստի տարբեր ճյուղերին հասու լինելը (մշակութային կարողունակություն) զարգացնում է ստեղծագործական մտածողությունը և գեղագիտական ճաշակը:

Եվ վերջապես՝ լեզվական գրագիտություն և կարողունակություն, որը սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքն է: Միայն նրա հիման վրա կարող են ձևավորվել

գրագիտության մյուս ձևերը՝ քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն: Լեզվական գրագիտությունը դրսևորվում է ոչ միայն բոլոր առարկաների ուսումնական գործընթացում, այլև մեր հասարակության բոլոր ոլորտներում: Շատ հաճախ բազմաթիվ թյուրըմբռնումներ են առաջանում լեզվի ոչ գրագետ կիրառության պատճառով: Կարծում ենք՝ կարողունակությունների ձևավորման գործընթացում չափազանց կարևոր է հայոց լեզվի և գրականության դերը: Փորձենք վերլուծությունների և փաստերի միջոցով հիմնավորել մեր տեսակետը:

Հայոց լեզուն և գրականությունը՝ որպես կարողունակությունների ձևավորման հենք

Դպրոցներում սովորողների ուսումնառությունը, տարբեր սոցցանցերում հաղորդակցման մակարդակի, հեռուստատեսության և ԶԼՄ-ների լեզվի դիտարկումն ու վերլուծությունը վկայում են, որ լեզվի գրագիտության խնդիրն օրեցօր ավելի ու ավելի առաջնահերթ է դառնում: Լեզվական գրագիտությունը պահանջում է և՛ այնպիսի բառապաշար, որ բառիմաստի շփոթություններ չառաջանան, և՛ պատկերավոր խոսքի տիրապետում՝ լսարան գրավելու, խոսքը ճիշտ տեղ հասցնելու համար: Լեզվական գրագիտության պակասն է, որ այսօր հանրային շատ գործիչների գցում է անհարմար, երբեմն ծիծաղելի իրավիճակների մեջ: Լեզվական գրագիտության և կարողունակության կարևորումը կնպաստի, որ այն հանրային պահանջարկ դառնա և ցանկացած ոլորտում անհատի կայացումը կախված լինի նրանից, թե որքանով է տիրապետում իր մայրենի լեզվին: Ցավոք, այսօր նկատվում է հակառակ միտումը (Բարձրագույն ուսումնական հաստատությունների շատ բաժինների համար ընդունելության միասնական քննությունների ցանկից հայոց լեզուն ամբողջապես դուրս է մղվել):

Ընդհանրապես յուրաքանչյուր ուսումնական առարկա բաղկացած է տեսական նյութից և տրամաբանությունից: Նախկինում հաճախ կարելի էր հանդիպել այնպիսի իրավիճակների, երբ առաջնային նպատակ դարձնելով նյութի յուրացումը՝ երկրորդական պլան էր մղվում դրա յուրացման տրամաբանությունը: Օրինակ՝ քերականության դասերին սովորողը ուսումնասիրում էր գոյական, ածական, բայ, ստորոգյալ, դերբայական դարձված և այլն՝ իրենց տեսակներով, բայց ուշադրություն չէին դարձնում դրանց սահմանման և դասակարգման ձևերին, որոնք, սակայն, խիստ կարևոր են և բոլորին միշտ էլ պետք են լինելու: Ինչ խոսք, տեսական նյութի յուրացումը անհրաժեշտ է և կարևոր, բայց նույնքան կարևոր է նաև նրա կիրառության հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Օրինակ՝ 8-րդ դասարանում «Պարզ և բաղադրյալ ստորոգյալներ» թեմայի ուսումնասիրությունը կարող ենք կազմակերպել զրույցի միջոցով: Գրատախտակին գրվում են կարդում էր, լսում ենք, գնում է, վազում եմ, հաճելի է, ընկերներ են ստորոգյալները և աշակերտներին առաջարկվում է պարզել, թե ինչով են դրանք տարբերվում միմյանցից ըստ կազմության: Երեխաները այդ

ստորոգյալները բաժանում են երկու խմբի և նկատում, որ մի խմբում այն ստորոգյալներն են, որոնք բաղկացած են որևէ անունից և օժանդակ բայից (հաճելի է, ընկերներ են), իսկ երկրորդ խմբում բայի խոնարհված ձևերով կազմվածներն են (կարդում էր, լսում ենք, գնում է, վազում եմ): Աշակերտներից մեկը դրանք գրանցում է գրատախտակին պատկերված Т–աձև աղյուսակում, շարքերը լրացվում են նոր օրինակներով: Ուսուցչի օգնությամբ անվանում են տեսակները և փորձում են ձևակերպել սահմանումները: Ապա ուսուցիչը գրատախտակին գրում է նոր օրինակներ՝ մտածողն է, կանգնած ենք, գնահատելն է: Սովորողները փորձում են գտնել վերջին օրինակներում առկա օրինաչափությունը և նկատում են, որ դրանք բոլորն անկախ դերբայներով արտահայտված ձևեր են: Նրանք վերաձևակերպում են բաղադրյալ ստորոգյալի սահմանումը: Ապա ներկայացվում են կառուցվածք և գործառույթ խաչվող հասկացությունները: Աշակերտները կատարում են զույգերով աշխատանք: Յուրաքանչյուր զույգին տրվում է մեկ նախադասություն և հանձնարարվում որոշել ստորոգյալի տեսակն ու նախադասությունները վերաձևակերպել այնպես, որ փոխվի ստորոգյալի արտահայտությունը: Սա հնարավորություն է տալիս կատարելու վերլուծություն, ինչի շնորհիվ երեխաները տարբերակում են տեսակները, առանձնացնում և կարողանում են մեկից բխեցնել մյուսը: Կարծում ենք՝ ժամանակակից դասի առավելություններից է դասընթացին աշակերտի ակտիվության ապահովումը: Կարող ենք նկատել, որ ուսուցման այսպիսի տարբերակը նպաստում է հակասություն նկատելու, վարկածներ ձևակերպելու, որոնելու, սեփական տեսակետներ ունենալու և պաշտպանելու կարողությունների, ինչպես նաև վերլուծական մտածողության ձևավորմանը: Հայոց լեզվի ուսուցման արդյունավետությանը նպաստելու համար նախընտրում ենք կիրառել մտագրոհ, փոխներգործուն նշանների համակարգ: Բանավոր թե գրավոր տեքստեր շարադրելիս, ստեղծագործական շարադրություններ գրելիս արդյունավետ տարբերակ է ձնագնդին: Ժամանակակից մեթոդների կիրառումը նպաստում է, որ սովորողները ուսումնառության գործընթացում լինեն ավելի անկաշկանդ և համարձակ, ընկերների հետ համագործակցության շնորհիվ կարողանան դրսևորել և զարգացնել իրենց ինքնաճանաչողական և սոցիալական հմտություններն ու կարողունակությունները: Ճիշտ կառուցված համագործակցային հարաբերություններում սովորողը կարող է բացահայտել իր

կրթական կարիքները և գտնել դրանք բավարարելու միջոցներ: Պետք է նկատել, որ հայոց լեզվի ուսուցումը նախ և առաջ առանցքային է սովորել սովորելու կարողունակության և լեզվական գրագիտության և կարողունակության զարգացման համար: 9-րդ դասարանում «Դերբայական դարձված» թեման սովորելիս նախ հարկ է, որ աշակերտը վերհիշի 7–րդ դասարանում անցած «Բայ» թեման: Նա պիտի ճանաչի և տարբերի անկախ դերբայները, պետք է կարողանա ներկայացնել՝ ինչ է բառակապակցությունը, ընկալի դերբայական դարձվածը՝ որպես բայական բառակապակցություն, որի գերադաս անդամը որևէ անկախ դերբայ է, և հետո միայն դյուրին կդառնա նոր նյութի յուրացումը: Այս ընթացքում սովորողը մեկ անգամ ևս կգնահատի անընդհատ կրթության ներուժի կարևորությունը, քանի որ կարիք կունենա նախորդ տարիների վերջնարդյունքները օգտագործել նոր գիտելիքների յուրացման և կարողունակությունների շարունակական զարգացման համար:

Պետք է հստակ գիտակցել և պատկերացնել, որ հայոց լեզվի դասերին քերականության ուսուցումը միջոց է աշակերտների խոսքի և մտածողության, հետազոտական կարողություն-ների և ստեղծագործական ուժերի զարգացման համար: Հարկ է, որ հայոց լեզվի դասաժամերն ապահովեն ոչ միայն գիտելիքների յուրացումն ու մտապահումը, այլև խոսքի և մտածողության զարգացումը, ինչը կնպաստի և կծառայի պետության քաղաքացու և հասարակության մեջ օրինակելի անհատի ձևավորմանն ու զարգացմանը: Լեզվական գրագիտության կարողունակությունը զարգացնելու շնորհիվ կարող ենք ձևավորել ինքնուրույն և համարձակ քաղաքացիներ, որոնք չեն վախենա որոշումներ կայացնելուց և սեփական կարծիքը բարձրաձայն հայտնելուց: Սակայն չափազանց կարևոր է բարեկիրթ խոսելաձևի դաստիարակությունը, և ամենափոքրիկ հնարավորությունը պետք է օգտագործել այն ապահովելու համար: Լեզվական գրագիտության և կարողունակության ձևավորման ու զարգացման ատաղձը հայոց լեզվի և գրականության դասաժամերին ձեռք բերված գիտելիքներն են, հմտություններն ու կարողությունները: Իսկ ուսումնառության բազմազան մեթոդները և մոտեցումները այսօր ստեղծում են խթանող կրթական միջավայր՝ դարձնելով ժամանակակից դասն ավելի հետաքրքիր, ուսուցումն՝ ավելի արդյունավետ: Ճիշտ նպատակներ դնելու և կանխատեսված վերջնարդյունքներին հասնելու դեպքում հայոց լեզվի դասաժամերը կապահովեն ոչ միայն լեզվական գրագիտության և կարողունակության ձևավորումը, այլև խթան կդառնան մյուս առանցքային կարողունակությունների ձևավորման

համար: Մայրենի լեզվի դերն ու կարևորությունն ընդգծելու համար դասաժամերի ընթացքում կարող ենք ստեղծել արհեստական անհարմարություններ և խոչընդոտներ (խաղերի, բեմադրությունների միջոցով), որոնց հաղթահարումը հնարավոր կլինի միայն մայրենի լեզվի իմացության շնորհիվ:

Իսկ ի՞նչ է գրականությունը: Այն արտացոլում է իրականությունը, մարդկանց ապրելակերպն ու կենցաղը, նրանց մտածումներն ու զգացումները, ազնիվ ձգտումներն ու վեհ գաղափարները, պատկերում բնության տեսարանները, ներկայացնում է անձնուրաց և քաջարի մարտիկների հերոսական պայքարը, ինչպես նաև իրականության մեջ առկա արատավորն ու մերժելին: Դեռ նախորդ դարի ութսունականներին, անդրադառնալով դպրոցում գրականության դասավանդման նպատակներին, Զ. Գրիգորյանը գրում էր. «Դպրոցում գրականության դասավանդումը հետապնդում է երկու նպատակ, նախ՝ աշակերտներին սովորեցնել գեղարվեստական գրականություն, ապա՝ դաստիարակել նրանց այդ գրականության ոգով»(6): Բացարձակապես կիսելով Զ. Գրիգորյանի տեսակետը՝ դարձյալ ուշադրություն պիտի հրավիրենք այն տարբերակներին, ձևերին ու մեթոդներին, որոնք պիտի ապահովեն ու խթանեն այդ դաստիարակությունն ու զարգացումը: Ինչպես մյուս առարկաների դեպքում, գրականության դասընթացի ուսուցման արդյունավետությունը ևս կախված է ուսուցման ձևերի, մեթոդների և գործիքների ճիշտ ընտրությունից: Միայն այդ դեպքում սովորողը ձեռք կբերի այն կարողունակությունները, որոնք կդառնան նրա հետագա ձեռքբերումների և հաջողությունների գրավականը: Ուսուցման ընթացքում սովորողը ուսուցչի օգնությամբ ձեռք է բերում գիտելիքներ և հմտություններ, որոնք նրա մեջ ձևավորում են որոշակի հայացքներ և համոզմունքներ, մտածողական կարողություններ, որոնք դառնում են հստակ դիրքորոշում և ձևավորում նրա արժեքային համակարգը: «Գևորգ Մարզպետունի» վեպն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել պատմության մեջ անհատի դերի հարցին, քանի որ այն շատ կարևոր է սովորողի աշխարհայացքի ձևավորման համար: Համակողմանի դիտարկման կարիք ունի անհատ–հասարակություն–ժողովուրդ հարաբերությունը: Մանրամասն վերլուծության է արժանի «Մի ծաղկով գարուն կգա» արտահայտությունը: Ինչպես են այն ընկալում աշակերտները, ինչ մեկնաբանություններ ունեն, ինչ է ուզում ասել Մուրացանը, ի վերջո որն է անհատի դերը ձևավորվող

համաժողովրդական պայքարում: Այս հարցերի պատասխանը փնտրելով անցյալում, համաշխարհային պատմության և իրականության մեջ՝ աշակերտը կարող է հանգել շատ կարևոր եզրահանգումների: Գուցե այսօր մենք իսկապես «զանգ կախողների», Մարզպետունու նման հայրենասեր անհատների կարիք ունենք, որոնք հարություն կտան ժողովրդի մեռած հավատին ու հիասթափությանը, կվերակազմակերպեն ժողովրդին և Ազատության կամ Հանրապետության հրապարակում ահեղագոչ կոչեր անելով միայն՝ հայրենիք չեն փրկի:

Կարևոր է նշել, որ գեղարվեստական գրվածքների ուսումնասիրման ընթացքում նկատի են առնվում սովորողների տարիքային առանձնահատկությունները, ֆիզիկական և մտավոր կարողությունները, բնավորության ու խառնվածքի յուրահատկությունները: Կարևոր է նկատել, որ գեղարվեստական գրականության մեջ կյանքն արտացոլվում է ստեղծագործական վերարտադրման միջոցով: Դրական հերոսները օժտված են լինում հայրենասիրության, ազատասիրության, անձնազոհության, հաստատակամության, ազնվության, աշխատասիրության բարձր հատկություններով և չարի ու բացասականի նկատմամբ ատելության, անհաշտության, վրիժառության զգացումներով: Այդ հատ-կությունները կրող հերոսներին ծանոթանալու, նրանց կերպարներն ու գործողությունները ճիշտ և համակողմանիորեն վերլուծելու շնորհիվ է ձևավորվում սովորող-մարդ-անհատը: Դրանք հարստացնում են նրա պատկերացումներն ու տեղեկությունները կյանքի վերաբերյալ, ձևավորվում են դիրքորոշում և արժեքային համակարգ, որոնք հետագայում դառնում են նրա կյանքի և գործունեության ուղեցույցները: Նվիրվածությունը հայրենիքին, անաղարտ ու նվիրական սերը, անխախտ ու անշահախնդիր ընկերությունը, ստեղծագործ աշխատանքը սովորողի մեջ դաստիարակում են այնպիսի հատկություններ, որոնք առաջ են մղում նրան, նպաստում նրա խոյանքին: Դասի ժամանակակից տեսակները, նորագույն մեթոդները հնարավորություն են տալիս աշակերտներին համակողմանիորեն վերլուծելու նյութը, օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիական միջոցները՝գտնելու և համադրելու տվյալ նյութին վերաբերող կարծիքները և կատարելու համապատասխան եզրահանգումներ: Կարդալով Նար-Դոսի «Ես և Նա» պատմվածքը, համադրելով (Վենի դիագրամ) գլխավոր հերոսներին՝ աշակերտը ձևավորում է հստակ տեսակետ, տեսնում դրական հերոսի հաջողության հիմքն ու բացասական հերոսի անկման պատճառը: Թումանյանի «Թմկաբերդի

առումը» պոեմի միջոցով հասկանում է դավաճանության գինն ու հետևանքը: «Ավելորդը» պատմվածքում ստվերի նման հետևելով Հաճի աղային, դառնալով նրա փախուստի ականատեսը, վերափոխության ու հոգեկան ապրումների վկան՝ սովորողն ի վերջո հասկանում է, որ կյանքում ավելորդ մարդիկ չկան, և նյութական ոչինչ չի կարող սփոփել մարդկային կյանքի կորուստը: Ծանոթանալով «հասարակաց որդեգիր» Գևորգին, իմանալով նրա գլխին եկածը՝ նորից քննության նյութ է դառնում անհատ–հասարակություն փոխհարաբերությունը՝ ժամանակակից իրականության մեջ փնտրելով նոր գևորգների: Ճիշտ է, որ «գրականությունը տալիս է աշխարհի իսկական ճանաչողությունը, հասարակության անցյալ և ներկա կյանքի համադրական, ամբողջական ըմբռնումը և պատկերում նրա ապագան, զարգացման հեռանկարները»(7,73): Սակայն գրական երկը անհնար է լիարժեք ընկալել՝ առանց հասկանալու նրա լեզվառճական առանձնահատկությունները: Ինչպես Թումանյանն է ասում. «գրական երկի համար մի բառը մի աշխարհ է»:

Բոլոր մեծ գրողներին անհանգստացրել է լեզվի մաքրության և անաղարտության հարցը: Դիմելով օտարների լծի տակ տառապած իր ժողովրդին՝ Խ. Աբովյանը գրում է. «Քեզնից չեմ նեղանում,աչքիս լույս, մեր բախտի ժամանակն էնպես ծռվել էր մինչև հիմա, որ մարդ իր գլուխը չէր կարում պահիլ, ուր մնա լեզվի դարդը քաշիլ: Էս ա պատճառը,որ մեր նոր լեզվի կեսը թուրքի և պարսից բառ ա: Բայց սրա դեղն էլ հեշտ ա, քիչ-քիչ կարելի ա իստակել, երբ ազգը ուսում առնի և իր լեզվի բառերը քիչ-քիչ հասկանա»(8,64): Ինչպես նկատում ենք, մեր կյանքում լեզվի կարևորության գնահատման խնդիրը ունեցել ենք միշտ: Այն առկա էր 19-րդ դարում, կար դրանից առաջ, մնում է այսօր: Հայ գրողների ստեղծագործությունները արժևորվում են նաև նրանով, որ բովանդակում են հայոց լեզվի հարուստ բառագանձը, թևավոր խոսքերը, պատկերավորման և արտահայտչական միջոցներն ու հնարանքները, որոնք նպաստում են սովորողի բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը: Շատ կարևոր են գրականության ուսուցման ձևերը, հնարքներն ու մեթոդները, որոնց ընտրությունը պայմանավորված է ուսուցանվող նյութի յուրօրինակություններով, սովորողների տարիքային առանձնահատկություններով և բովանդակության թելադրանքով: Այստեղ է, որ ուսուցիչը պետք է ցուցաբերի ստեղծագործական մոտեցում, հմտություն և մանկավարժական վարպետություն: Գրականության դասը կարող է անցկացվել թանգարանում, ցուցահանդեսում, որևէ զբոսավայրում կամ պատմամշակութային վայրում. ինչն ավելի

դյուրին կարող է դարձնել թեմայի ընկալումը: Ուսուցման գործընթացում կարևոր նշանակություն է ստանում նաև տեխնիկական միջոցների օգտագործումը՝ դիտաֆիլմ, աուդիո և տեսաձայնագրություններ, համացանցային տեղեկույթ և այլն: Սովորողների կարողունակությունների զարգացմանը նպաստում է այն, երբ նրանք ինքնուրույն որոնումների, պրպտումների, հետազոտությունների միջոցով են յուրացնում նյութը: Շատ կարևոր է գրականության և այլ առարկաների փոխկապվածությունը. այսինքն՝ միջառարկայական կապը գրականության և այլ առարկաների միջև: Գրականության դասը սերտորեն կապված է պատմությանը, աշխարհագրությանը, նկարչությանն ու երաժշտությանը: Հետևաբար ուսուցչի ուղղորդմամբ գրական նյութի ճիշտ և համակողմանի ընկալումը, խորքային վերլուծությունները, սովորողի՝ դրանց շնորհիվ ձևավորված դիրքորոշումն ու վերաբերմունքը կարող են նպաստել համապիտանի կարողունակությունների ձևավորմանը:

Եզրակացություն

Որքան ավելին լինես, քան էիր,
Այնքան ավելի մեծ մարդ կլինես :

Ուիլյամ Շեքսպիր

Անհատի ձևավորման, նրա մասնագիտական հաջող գործունեության համար կարևոր է ոչ միայն սովորողի իմացական մակարդակը, այլև առանցքային կարողունակությունների ձևավորումը, ինչը ուսումնական գործընթացը դարձնում է էլ ավելի հետաքրքիր և ուսումնառությունն՝ արդյունավետ: Կարողունակությունների վրա հիմնված կրթության մոտեցմամբ առարկաները դիտվում են որպես գործիք առավել ընդհանրական որակների ձևավորման համար: Կրթության բովանդակությունը ձևավորվում է ոչ թե առանձին առարկաների, այլ կարողունակությունների հենքի վրա: Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է, գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ: Ճանաչելով սեփական եսը, իմանալով, թե ինչ կրթական կարիքներ ունի ինքը, ունենալով անընդհատ կրթության ներուժի կարևորության ընկալում, մեդիադաշտում աշխատելու հմտություն, ուսումնառության արդյունքները կյանքի տարբեր համատեքստերում կիրառելու հետաքրքրասիրություն՝ սովորողը այս կամ այն ոլորտում ծագող խնդիրները հաջողությամբ լուծելու հնարավորություն է ստանում: Կարծում ենք՝ դրան հասնելու գործընթացում էական նշանակություն ունեն հայոց լեզուն և գրականությունը: Եթե հայոց լեզվի ուսուցիչը հասել է իր առջև դրված նպատակներին և իրավամբ գրանցել է այն վերջնարդյունքները, որ նախանշել էր, ապա անհատի կայացումը կյանքի ցանկացած համատեքստում և ոլորտում ավելի դյուրին կդառնա: Իր «Ընդհանուր մանկավարժագիտություն» գրքում Սերգեյ Մանուկյանը, հղում անելով Ա. Ս. Պուշկինին, մեջբերում է վերջինիս՝ իր ուսուցչին նվիրված հետևյալ միտքը. «Նա ստեղծեց մեզ, նա դաստիարակեց մեր հուրը, նա հիմնադրեց անկյունաքարը և մաքուր կանթեղ վառեց»(9,5):

Օգտագործված գրականության ցանկ

1.https://www.internest.am/,16.09.2023, 20[40]

2. https://elearning.kasa.am/, 09.09.2023, 19[51]

3. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005թ.:

4. https://elearning.kasa.am/, 16.09. 2023թ, 21[25:]

5.https://thepdcafe.com/, 50 լավագույն ասույթները անձի զարգացման մասին:

6. Զ. Մ.Գրիգորյան, Գրականության դասը 7-րդ դասարանում, Լույս, 1983 թ:.

7. Թ. Ջուհարյան, Հայ գրականության մեթոդիկա, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1980:

8. Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1948:

9. Ս.Մանուկյան, Ընդհանուր մանկավարժագիտություն, Երևան, «Զանգակ» հրատ., 2005 թ.: